ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա Արժեքային կրթությունը դպրոցում

Կատարող Լիլիթ Մխիթարյան Նորիկի

/

ՀՀ Շիրակի մարզի <<Մեղրաշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ հասարակագիտություն

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3--6
Գլուխ առաջին: Արժեքների ձևավորումը հասարակագիտության դասաժամերին:----------7-14
Գլուխ երկրորդ: Մտավորականության դերը արժեքների ձևավորման գործում: ----------15-20
Եզրակացություն----------21
Օգտագործված գրականության ցանկ----------22

Ներածություն

Յուրաքանչյուր ազգ, որպես գոյապահպանման արտահայտում, ձեռնամուխ է լինում իր ազգային ծրագրերի ստեղծմանը; որն ստացել է ազգային գաղափարախոսություն անվանումը:

Ազգային գաղափարախոսության խնդիրները ժողովրդի գոյապահպանումն է,նրա ազատ, անվտանգ, բնականոն ու բազմակողմանի զարգացումը;

Ազգային արժեքները ներառում են յուրաքանչյուր ազգի կողմից դարերի ընթացքում կուտակված հոգևոր և մշակութային արժեքները: Ուսուցման գործընթացում ներդնելով մեր ազգի ժառանգությունը, հոգևոր հարստությունը՝ մենք ձևավորում ենք համակողմանի զարգացած, կիրթ անձնավորություն՝ իր տեսլականով, որը ի վիճակի է հայ ժողովրդի արժեքավոր մտքերը, իմաստությունը, կյանքի փորձը օգտագործել ի շահ ժողովրդի:

Բոլոր ժամանակներում մարդկության առջև ծառացած մեծ խնդիրը գիտակից սերնդի դաստիարակությունն է: Սերնդի դաստիարակությունը ազգի ապագան է: Ազգային դաստիարակությունը մեր հարստությունն է, որը մենք փոխանցում ենք սերնդե սերունդ: Դա մի մեծ գիրք է, որը կրթում է ապագա սերունդներին ապրել. իսկ դաստիարակությունը խոր արմատներ ունի ժողովրդի մեջ, նրա արժանապատվությամբ ու միասնականությամբ:

Յուրաքանչյուր ժողովուրդ պատմության բեմահարթակ իջնելու պահից ձեռնամուխ է լինում իր գոյապահպանման համակարգի կառուցմանը, որի հիմնական խնդիրն է՝ ազգային գաղափարախոսության ստեղծումը, նրա ազատ, անկախ, անվտանգ ու բարեկեցիկ կյանքի զարգացման, ինքնապահպանման և հարատևման միտումը: Իսկ ազգապահպանության միջնաբերդը բոլոր ժամանակներում եղել և մնում է դպրոցը: Հանրակրթությունը մեզ համար ռազմավարական, ազգային և պետական անվտանգության խնդիր է, և պետք է օրվա հրամայական դառնա ազգային ռազմավարության հայեցակարգի մշակումը: Այդ գործին զինվորագրվելու ենք բոլորս, հատկապես ուսուցիչներս:

Այսօր մեր դպրոցում պետք է գերակայի ազգային գաղափարախոսությունը: Դասագիրքը պետք է ոչ միայն արձանագրի հայոց պատմության փաստերը, այլև շունչ ու ոգի հաղորդի դրանց: Դասագիրքը միջոց է, բայց ոչ նպատակ: Մենք՝ ուսուցիչներս, գիտակցելու ենք ուսուցչի բացառիկդերը՝ հայ երեխայինազգային ոգիներարկելու, նրան համարժեք կրթություն և դաստիարակություն տալու գործում: Այդ մարտադաշտում մեզ համար փարոս և ուղեցույց են Գարեգին Նժդեհի խիստ արդիական տեսակետները՝ հայրենիքի, հարազատ ժողովրդի, հայ երեխայի ապագայի մասին: *<<Ով հայրենապաշտ և գաղափարաշատ երիտասարդություն ունի՝ նա էլ ապագա ունի>>*,- Սա է ռազմական գործչի ու մեծ փիլիսոփայի համոզմունքը:

*<<Մեկից ավելի անգամ դժբախտություն եմ ունեցել լսելու ազգային պատմություն դասավանդող հայ ուսուցչին և խորապես ցավել եմ մեր աշակերտող սերնդի համար: Մի կենդանի մեռել, մեռյալ շեշտերով խոսում է մեռելների մասին: Պատմությունը նրա համար անհոգի կմախք է և ոչ թե բաբախող սիրտ: Նա հետևակ գիտելիքներ ունի մեր պատմության այս կամ այն շրջանի մասին, գիտի ցամաք անցքեր, թվեր, անուններ, այսքանը միայն: Նա սիրտ չունի և սիրտ չի դնում իր դասերի մեջ: Միևնույն տրամադրությամբ նա խոսում է և՛Տիգրան Մեծի և՛Վեստ Սարգիսի մասին: Հպարտանքից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգերը, երբ պատմում է, թե ինչպես պարսից արքան, հայ սպարապետիանօրինակքաջագործություններից հիացած, ամեն անգամ երբ գինու բաժակը շրթունքներին կմոտեցներ, կդժվարանար չբացականչել՝ «Ճերմակաձին գինի խմե>>: Ամոթի զգացումը չի այրում նրան, երբ իր խոսքը հայ խռովասերնախարարիչարագործությունների մասին է : Մեղմ ասած՝ ստեղծագործ վերապրում չէ նրա ավանդած պատմությունը, այլ անհոգի հնախոսություն, քանզի **իրեն կպակասի ազգային հպարտանքի նվիրական զգացումը***»,- ցավով գրել է Գարեգին Նժդեհը:

Ես՝ որպես պատմության ուսուցիչ , ելնելով ուսուցման անձնական մեթոդից և արդյունքից, առաջնորդվում եմ մեր մեծ հայի և անզուգական ազգային գործչի ՝ Գարեգին Նժդեհի գաղափարախոսությամբ, իմ բոլոր դասերը ներծծված են նրա ազգային գաղափարներով: Ուսուցիչն իր օրինակով պետք է կարողանա երեխայի մեջ ներարկել ազգային ոգի, արժանապատվություն, բացառի պարտվողական տրամադրությունները, հասնի նրան, որ երեխանանսահմանորեն սիրի իր ազգը, իրեն համարի տեր և պաշտպան իր երկրի: Չմոռանանք ՝ ազգային ոգին ապահովեց մեր հաղթանակը Արցախյան ազատամարտում: Սակայն ազգային գաղափարախոսության բացակայությունն է պատճառը, որ Արցախյան նույն գոյամարտում հաղթած, հայրենի, հայրենի բռնագրավված հողի որոշ հատվածներ ազատագրած հայն այսօր չի ապրում հաղթողի հոգեբանությամբ: Երեխային ազգային գաղափարներ կարելի է ներարկել դասժամերին, դասից դուրս, դասագրքով, առանց դասագրքի, խոսքով, անձնական օրինակով: Մեր պատմության փառահեղ էջերին, հերոսական քաջորդիներին նվիրված միջոցառումները, նահատակների հիշատակի խնկարկումները և նրանց օրինակներով դաստիարակելը , պատմամշակութային վայրեր այցելությունները սովորողների մեջ արթնացնում և ամրակայում են ազգային ոգին:

Նժդեհը շարունակել ու զարգացրել է ազգային գաղափարախոսության այն հիմնական սկզբունքները, որոնք ձևավորվել են Մաշտոցի ժամանակներից ի վեր և շարունակվել 19-րդ դարում ՝ գաղափարական նոր ընդհանրացումներով:

Ո՞րն է Գարեգին Նժդեհի հիմնական դերակատարությունը հայոց պատմության մեջ,ո՞րն է նրա գլխավոր բնութագրականը:Իբրև ազգային գործչի: Դեռևս երիտասարդ, նա արդեն իսկ լեգենդ էր, անվերապահ հեղինակություն ազգային բոլոր շրջանակների համար: Իր կյանքի 52 տարիներն ամենօրյա ընթացքով և բովանդակությամբ նվիրել են հայրենիքին և դրվագ առ դրվագ հյուսել որպես բազկի և մտքի լայնածավալ ժառանգություն, որի սոսկ թվարկումը պահանջում է ակադեմիական մոտեցում, իսկ գնահատումը, ինչպես ցույց է տալիս ժամանակը, մի քանի սերունդների գործ է: Իբրև զորավար ՝ Գարեգին նժդեհին կարելի է համեմատել թերևս միայն Անդրանիկի հետ: Իբրև քաղաքական գործիչ ՝ նրան կարելի համեմատել Արամ Մանուկյանի հետ: իսկ իբրև մտածող, ազգային քարոզիչ և գաղափարախոս՝ նրան կարելի է համեմատել թերևս միայն ինք իր հետ: Հայ ազատամարտի հազարամյա ալեծուփ ժամանակներում թերևս չկա մեկը մեր անպանթեոն հերոսներից, որ իր ռազմական բնատուր տաղանդնն այնպես ներդաշնակորեն միաձուլեր իր մտավոր հզոր կարողություններին, որքան Նժդեհը: Ոչ ոք այնքան լավ չէր հասկանում

ռազմաքաղաքական իրադրությունը, որքան Նժդեհը: Նա հրաշալիորեն ըմբռնում էր պատմական պահի թելադրանքն ու պարտադրանքը. երբ պետք էր դադարեցնել կռիվը, և այդպես դժբախտ սպարապետը հակառակ իր կամքին լքեց երկու տարի իր հետ հաղթանակներ տարած ժողովրդին ու իր զինակիցներին: Նա երկար ժամանակ չի հեռանումԱրաքսի աջ ափից՝ սպասելով իր հերոսների կանչին: Ավա՜ղ չի լինում ոչ մի կանչ:

«Գլուխը երբեք չխոնարհել թշնամու առաջ, հայրենիքը փրկելու համար արհամարել նյութականը, ճաշակել վիշտ ու տառապանք, սակայն բարձրացնել ցեղի հոգին՝ որպես հաղթանակի առհավատչյա»- այդպիսին էր Նժդեհը: Բարձրագույն երջանկություն է ըմբռնել Նժդեհի ոգին՝ ճշմարտության որոնումներում, և հավատալ, որ սուրբ գործը չի մեռնում երբեք:

«Անցեղաճանաչ է, անզոր ու նվաստ է հին հայը, մեզ պետք է նոր հայ, որին ասպասում ենք ցեղակրոնությունից, գրում է Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը-- ***Մեզ պետք է ցեղակրոն, որ կարողանա դիմանալ մերօրյա աշխարհին: Ցեղակրոնությունը ցեղի ճանաչումն է»,-*** ասել է Նժդեհը:

Գաղափարը երբեք չի թաղվում…

Ես Նժդեհին չեմ տեսել, բայց միշտ զգացել եմ նրա ներկայությունը: Երբ հայաստան եկա, հասկացա, որ նժդեհները չեն մեռնում: Իսկապես, ժամանակներն են ծնում հերոսներ: Իսրայելի տառապանքից և սրբությունից ծնվեց Մովսես Մարգարեն: Նժդեհը շատ դժվարություններ ունեցավ, չհասկացվեց, տառապեց, գաղտնի պահվեց, բայց այսօր ամբողջ ազգն է խոնհարվում նրա հիշատակի առջև....

հպարտ եմ նրանով, նրա գործով, նրա հիշատակով…

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ : **Արժեքների ձևավորումը հասարակագիտության դասաժամերին**

Հայ ժողովրդի մեծերի շարքում, ինչպես ամեն ճշմարիտ առաջնորդ, իր արժանի տեղն է գրավում Գարեգին Նժդեհը (Տեր-Հարությունյան): Անգնահատելի է այդ մեծ հայորդու դերը Ղարաքիլիսայի ու Զանգեզուրյան հերոսամարտերում, նրա քարոզչական, հայապահպան և հայանպաստ գործունեությունը՝ Սփյուռքում և Հայրենիքում: Գարեգին Նժդեհի պատմական ժառանգությունն իր խորհրդով հայ սերնդի հայեցի դաստիրակության, Հայրենիքին նվիրվելու և ծառայելու շտեմարանն է: Նժդեհն այն բացառիկ պատմական անհատներից է , որոնք բնորոշվում են որպես փայլուն ռազմագետ ու քաղաքագետ, գաղափարական, ազգային, պետական ու հասարակական գործիչ, ինչպես նաև՝ իբրև 20-րդ դարի հայ իմաստասիրական հանճարեղ ներկայացուցիչներից մեկը: Նժդեհյան գաղափարախոսության ամբողջական ներկայացումը չի կարող ամփոփվել մեկ հոդվածի շրջանակներում: Ուստի փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել Նժդեհյան ուսմունքի առանցքային գաղափարները և ցույց տալ դրանց արդիականությունը մեր օրերում:

Նժդեհյան ուսմունքի հիմնաքարը Ցեղի գաղափարն է: Այդ հիմքի վրա էկառուցվում նրա ցեղակրոնության գաղափարախոսությունը՝ հետագայում ամբողջանալովտարոնականության մեջ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում խոսել Նժդեհի կողմից մշակված և ցեղակրոնության փիլիսոփայության մեջ արտահայտված՝<<ցեղակրոն>> բառի իմաստի և նշանակության մասին: Առայսօր, այդ կապակցությամբ տարբեր հետազոտողների կողմից, մասնավորապես՝ Մուշեղ Լալայանի, Արամ Սարգսյանի, տրվել են տարբեր մեկնություններ և բացատրություններ, որոնք հիմնականում հանգում են նրան, որ <<ցեղակրոն>> բառի մեջ <<կրոն>>վերջավորության օգտագործումը ոչ մի առնչություն չունի կրոնի ավանդական ըմբռնման հետ:

Համձայնելով հեղինակների հետ՝ պարտավոր ենք նշել նաև Նժդեհի տեսակետը, ըստ որի՝ ցեղակրոնությունը<<… որեւէ հանգստություն չունի այլ ուսմունքների հետ. իսկ եթե կրոն է դա, ապա դա կրո՛ն է ցեղային հպարտության, ուժի և արիության, դա քո՛ կրոնն է

նորահաս սերունդ>>: Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ Նժդեհն իր աշխատանքներում հաճախ ցեղ բառը օգտագործում է նաև ազգ իմաստով: Հիշենք, որ հայերենում այդպիսի բառեր ևս կան, որոնց մեջ ցեղը կարող կարող է ունենալ երկակի իմաստ՝ օգտագործվել նաև ազգ, ազգություն իմաստով, մասնավորապես՝ ցեղասպան, ցեղասպանություն, զեղափոխություն և այլն: Մեր կարծիքով՝ Նժդեհի փիլիսոփայության մեջ ցեղը պետք է դիտվի ավելի շատ ոգու՛, ոգեղե՛ն իմաստով, իսկ ցեղակրոնությունը՝ որպես որոշակի ապրելակերպ, աշխարհընկալում, աշխարհայացք, որը միտված է ազգային ինքնության, արժեքների, մշակույթի, լեզվի, ավանդության պահպանմանը, ազգակենտրոնմտածելակերպով օժտված հասարակության ձևավորմանը: Ընդհանրապես դժվար է տալ ցեղի ամբողջ էությունը եզնույթն ընդգրկող սահմանում: Ժամանակին ցեղի սահմանման փորձեր են արվել նաև Նժդեհի կողմից, մասնավորապես՝ <<Ցեղային արթնություն>> աշխատանքում և Ցեղակրոն շարժման գաղափարական ժառանգորդ՝ Տարոնական շարժման գաղափարախոսներից փիլիսոփայության դոկտոր և Նժդեհի ամենամտերիմ գործակից՝ Հայկ Ասատրյանի կողմից՝<<Դարձ դէպի ոգին>>, <<Տարօնականաշխարհայեցողութիւն>>, <<Նախնական ծանօթութիւններ ցեղի մասին>> աշխատանքներում և այլն: ինչպես նշում է Նժդեհը. <<Մարդաբանության ցարդ տուածսահմանումներից և ո՛չ մեկն ընդունելի չէ ինձ համար: Ցեղ հասկացողությունը սահմանելու համար բավական չէն հին եզրերը: Նրանցով չի կարելի սպառել ցեղի ողջ տարողությունը… Դժվար է դա սահմանել գիտական լեզվով: Այստեղ միայն հարաբերական գիտակցության մասին խոսք կառող է լինել>>: Հատկանշական են նաև ցեղի մասին Նժդեհի հետևյալ դիտարկումները. <<Ոչ ցեղաշունչ ժողովուրդը ընդունում է օտար մշակույթը՝ ապազգայանալով: Ցեղը ազգայնացնում է ընդունածը… Ցե՛ղն է հոգևորզինարանը… երբ ցեղն է գործում, գարահիսարցի մի հյուսն դառնում է Անդրանիկ, և սեբաստացի մի շինական՝ Մուրադ… Որքան տիրական է ցեղի ազդեցությունը ժողովրդի կյանքում, այնքան հեշտ է ինքնապաշտպանվում վերջինս>>: Չափազանց բնորոշիչ է նաև Հայկ Ասատրյանի հետևյալ դիտարկումը. <<Ցեղը՝ դա և՛ արիւն է, և՛ ոգի:Դա և՛ կամք է, եւ՛ բանականութիւն: Դա և՛ առաջնորդ է, և՛ ռազմիկ: Դա և՛ խորհուրդ է, և՛ ստեղծագործութիւն: Դա և՛ տառապանք է, և՛ հաղթանակ: Ցեղը միայն կարող է փոխել պատմության ընթացքը>>: <<Ցեղ>>եզրույթընժդեհյան տեսության մեջ, մեր դիտարկմամբ, օգտագործում է որպես արյան, ոգու, դիմագծի, ավանդության, մշակույթի համախումբ, որը կարող է արտահայտվել ժողովրդի սերուցքի նրա ընտրանու մեջ: Այսինքն՝ այստեղից կարելի է եզրակացնել, որ

ժողովուրդն այնքանով է կենսունակ, մարտունակ և ստեղծագործող, որքան շատ է նրանում այդ սերուցքի տեսակարար կշիռը, այսինքն՝ նրան համախմբողի, միաբանողի, առաջ մղող և կենտրոնաձիգ ուժի, իսկ վտանգի դեպքում՝ նրա պաշտպանությունը, անվտանգությունը ապահովողի, ինչպես նաև՝ ժողովրդի կազմակերպչի, շարքերը <<ցեմենտողի>> դերը: Հենվելով ցեղակրոնության փիլիսոփայության վրա՝ կարելի է մեկնել, որ ցեղակրոնները հայ հասարակության այն հատվածն են, որոնց մեջ առկա են ազգային գիտակցության բարձր մակարդակը և ազգային պարտականության խոր զգացումը: ցեղի մեջ է ամփոփված նաև ազգի հոգևոր և իմաստությունն արտահայտող էությունը: Բանձևելով վերոնշյալը՝ պետք է փաստել, որ ցեղակրոնը վերոնշյալըարժեքային համակարգի կրողն է:

- ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ Եվ ՊԱՏՄԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ՝ սեփական ճակատագրից դասեր քաղելու, պատմության խորհուրդը հասկանալու կարողություն.
- ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄ՝ կապվածությունը սեփական ազգին և նրա ճակատագրին: Ազգի համար վճռական պահին պատրաստ լինել կյանքը զոհաբերելուն և սրբորեն հետևելու Մամիկոնյանների ուխտին. << Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար, և թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծոփառավորման վայրերի ոտից կոխան լինել,պղծվելը, այլ՝ թշնամիների սուրը թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի, ապա թող անեն՝ ինչ կամենան: Մեր անձերը զոհենք ճշմարիտ հավատի և ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր մահվան դիմաց կա հավիտենական կյանք>>:
- ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ. հոգևոր կապ ներկա և անցած սերունդների միձև, ինչպես նաև՝ հայ ազգի հերոսական էջերը վերապրելու և ողբերգական էջերը հիշելու կարողություն ունենալ.
- ԿՐՈՆԻ, ԼԵԶՎԻ՝ որպես ինքնապահպանման կարևորագույն համակարգերից մեկի, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, արյան անաղարտության ավանդության արմատավորումը: Վերջին դրույթը, մեր համոզմամբ, Նժդեհի կողմից կարևորվել է՝ հայության միջև ամուսնության ավանդույթի պահպանման միջոցով նրա աշխարհասփյուռ բեկորներն ուծացումից փրկելու առումով, այլ ոչ թե՝ այլ ազգերին ատորադասելու կամ գերադասելու նկատառումով:
- ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՉԸ, որի միջոցով միայն, ըստ նժդեհյան փիլիսոփայության, հնարավոր է բռունցքել հայ ազգի ուժերը և իրականացնել մեր միասնական նպատակները: Նժդեհի փիլիսոփայության մեջ հստակ արտահայտված է

հատվածականության և կույր կուսակցամոլության մերժման գաղափարը, միաժամանակ՝ բոլոր այն վարդապետությունների, քաղաքական, կրոնական, հասարակական հոսանքների մերժումը, որոնք օտարացնում են մեր սերունդը ազգային արժեքներից.

- ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ՝ այդ տեսակետից հատկանշական է Նժդեհի հետևյալ բնութագրումը. <<Ազգային բարոյականի տեսակետից՝ մի Գյուլբենկյանավելի չարժի, քան՝ Հայաստանի մի գեղջուկ, և մի զորավար, մի ուսուցչապետ, քան՝ մի համեստ արհեստավոր, էականը հավիտենական հայկականությունն է, որ ազգությունը նվիրագործում է իր ամեն մի անդամի մեջ.. Ճակատագրի եղբայր է ամեն հայ: Ավելին՝ ամեն հայ՝ դա դու՛ ես- ահա՛ ազգային բարոյականի անխախտելի օրենքը>>.
- ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ Հայրենիք վերադառնալու, Հայրենիքին տիրելու, այսինք Հայրենատիրության վեհ գաղափարը, որն ըստ Նժդեհի ու ծացումից խուսափելու միակ ճանապարհն է: Զարգացնելով այս գաղափարը՝ նշենք, որ հայրենատիրությունը նաև՝ հայրենիքում ստեղծագործելու, հոգևոր, պետական, տնտեսական, շինարարությամբ զբաղվելու, հայրենիքը շենացելու, հզորացնելու հայրենասիկրական ձգտումն է՝ ազգերի, պետությունների հանրությում Հայաստանի յուրաքանչյուր հայի արժանապատիվ տեղն ու դերը ապահովելու համար:
- ՀԱՐԳԱՆՔ և ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ՀԱՅ ԱԶԳԻ ՄԵԾԵՐԻ ԵՎ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԱՌՋԵՎ. արդիական է նաև հիշել ապրիլյան պատերազմի քաջ նահատակնեին:
- ՈՒԺԻ և ԱՐԻՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ, ՀՈԳԵՎՈՐ և ՄԱՐՄՆԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.
- ՊԱՐՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔԻ՝ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՍԱՐՍԱՓԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԱՆԴԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ, ԵՍԱԿԵՆՏՐՈՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ անձնականի նկատմամբ:
- ՀԱՐԳԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ.
- ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ.

- ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ. <<Սոցալիապես որքան արդար, այնքան զորավոր է հայրենիքը: Գերերջանիկ է այն մարդը, որ կարող է ասել իմ հայրենիքում արևը ծագում է բոլորի և ամեն մեկի համար, այնտեղ երկիրը մշակելու և հոգեպես մշակվելու ազատություն ունեմ ես>>,- գրում է Նժդեհը.
- ՀԱՅԱՍՏԱՆԻ և ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ.
- ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ՃԻԳ. ըստ Նժդեհի՝ դա կյանքի առաջադիմության օրենքն է: Նախ պետք է նվիրումով, աշխատանքով, հայրենասիրությամբ, հանուն Հայրենիքի զոհաբերության պատրաստակամությամբ գեռազանցել նախորդ սերունդներին. Դրանից կախված է նաև արտաքին թշնամիներին և նոր մարտահրավերներին հաջողությամբ դիմագրավումը: Մեր պատկերացմամբ՝ գերազանցելու ձգտումը պետք է արտահայտվի ո՛չ միայն ստեղծագործական, կրթական, գիտական, այլև տնտեսական: Այդ կերպ պետք է հասկանալ մեր Հայրենիքի ու պետության տնտեսական հզորացումը և հարատև զարգացումը: Այդ զարգացմամբ այս սերունդը պարտավոր է գերազանցել իր նախորդներին: Ահա դրանում է տեսնում Նժդեհը ամեն նոր սերնդի ճշմարիտ ճանապարհը, որը նա սահմանում է որպես կյանքի առաջադիմության օրենք. <<բավական չէ հիացիկ վերաբերմունք, անգա՛մ պաշտամունք ունենալ դեպի անցյալ սերունդը՝ պե՛տք է գերազանցել նրան: Հենց սա է կյանքի առաջադիմության օրենքը, և հարգանքի այն պսակը, որ յուրաքանչյուր հետնորդ պարտավոր է դնել նախնյաց հիշատակների կոթողին>>:Նժդեհի փիլիսոփայության մեջ խիստ կարևոր է հետևյալ գաղափարը.ամեն նոր սերնդի դաստիարակության գործում պահպանելով նախորդին գերազանցելու միտումը՝լավագույն այլ հատկությունների թվում մենք կունենանք նաև տնտեսապես մրցունակ պետություն,որով կարող ենք դիմագրավել բազմաթիվ ներքին ու արտաքին մարտահրավերների:Դա կնպաստի նաև մեր երկրի անկախության ,տնտեսական և ռազմական անվտանգության ապահովմանը.<<բոլոր ժողովուրդները՝լուսավորյալ թե վայրենի ,ձգտում են արևի տակ հարմար և կայուն մի տեղ գրավելու: Նրանք զենքի են դիմում երբեմն ռազմասիրությունից, երբեմն մրցակցությունից,երբեմն էլ կույր ատելությունից մղված:Պտերազմում են ,երբ պետք է նորանոր շուկաներ ձեռք բերել,ծովերի տեր դառնալ,երբ պետք է ինքնապաշտպանվել կամ ապահովել այս կամ այն երկրի անկախությունը ... անկախությունից զուրկ ժողովուրդները դատապարտված են մահվան, ծառայելով գերիշխան ազգերի համար որպես պարտացուցիչ աղբ, ապավառ… Անկախ հայրենիք ունենալն իրավունք լինելուց բացի և պարտականություն է >>: Այստեղ

նույնպես Հայրենիքի անկախության տակ պետք է հասկանալ նաև տնտեսական անկախությունը, քանզի պետք է արձանագրել, որ պետության տնտեսական անկախությունը անմիկջականորեն կապված է նաև պետության քաղաքական անկախության հետ, քանզի տնտեսական մրցապայքարում պարտված և տնտեսապես ամբողջովին կախյալ պետությունը, վաղ թե ուշ, պետք է տեղի տա նաև քաղաքականապես:Վստահ ենք, որ Նժդեհը ՝ լինելով հեռատես և լայնախոհ պետական, հասարակական, ազգային գործիչ, անկախություն ասելով ՝ այն նկատի ուներ իր բոլոր դրսևորումներով: Սակայն հաշվի առնելով այդ պահի հրամայականը ՝ նա փորձում էր աշխարհասփյուռ հայությանը համախմբել համազգային ամենամեծ, առաջնայինխնդրի լուծման համար ՝ նախ տիրել Հայրենիքին և հասնել քաղաքական անկախության:

Վերոնշյալ դրույթները, մեր կարծիքով, այն հիմնական հենարանն է, որի վրա կառուցվում է մեծ հայորդու հայրենասիրական գաղափարախոսությունը: Այն, ընդհանուր առմամբ, կարելի է բանաձևել հետևյալ կերպ.Անհրաժեշտ է ստեղծել ազգային ինքնապաշտպանական համակարգ, միաժամանակ ծավալել հայ ազգի հարատևմանը, բնականոն զարգացմանը, հոգևոր և ֆիզիկական անվտանգության նրա բնական Հայրենիքի վերատիրմանը միտված պերմանենտ գործողություն, որը ելնելով նժդեհյան փիլիսոփայությունից, հնարավոր է լիարժեք իրականացնել միայն հայ ազգին կենսաբանորեն, հոգեբանորեն և պատմականորեն հարազատ միջավայրում՝ Միացյալ և անկախ Հայաստանում: Ավելորդ չէ նշել, որ նրա բազմաթիվդ իտարկումները ՝ կապված դպրոցի, մամուլի, հայ կնոջ, մտավորականության հետ, արդիական են հնչում նաև այսօր: Դրանք հատկապես երիտասարդության համար ունեն անգնահատելի դաստիրակչական նշանակություն և կարող են լուրջ դեր կատարել հայակրթության գործում: Մասնավորապես դպրոցի մասին խոսելով և քննադատելով իր ժամանակների հայկական դպրոցների կրթական գործընթացի բացթողումներն ու թերությունները ՝ Նժդեհը գրում է. <<Շեշտված նպատակը, ջերմությունը, հոգին է պակասում մեր արդի դպրոցին: Նա չէ, բայց պիտի լինի հայրենագտության ամբիոն, տաճար: Դեռ այնտեղ հայ մանուկը պիտի ճանաչի և սովորի սիրել հայրենի ժողովուրդն ու երկիրը>>: Ինչպես տեսնում ենք, Նժդեհը հատկապես կարևորում է հայկական դպրոցներում հստակ որոշարկված նպատակը դասավանդման համակարգված բնույթը հայրենասիրական մթնոլորտը: Միևնույն ժամանակ, նա

չափազանց մեծ ուշադրություն է է դարձնում դպրոցներում կիրառվող դասավանդման եղանակին, ոճին նյութի մատուցման ձևին: Ազգային դաստիարակության նպատակը, ըստ նրա, ազգային գիտակցության ձևավորումն է: Նժդեհի բնորոշմամբ՝ պետք է կրոնական երկյուղածությամբ դասավանդել հայրենագիտությունը, սրտի և մտքի կրակով խոսել հայրենի երկրի մասին՝ արթնացնելով հայրենիքի պաշտամունքը մանուկների հոգիներում: Փաստերի հետ միասին պետք է տրվեն նաև գաղափարներ, որոնք կհարստացնենմանուկների, պատանիների հիշողությունը, կբեղմնավորեն միտքը և կջերմացնեն սրտերը: Այստեղ նպատակահարմար ենք գտնում մեջբերել իր ժամանակաշրջանի պատմության ուսուցչի հետևյալ փայլուն նկարագրությունը. <<Մեկից ավելի անգամ դժբախտություն եմ ունեցել լսելու ազգային պատմության դասավանդող հայ ուսուցչին և խորապես ցավել եմ մեր աշակերտող սերունդի համար: Մի կենդանի մեռել, մեռյալ շեշտերով, խոսում է մեռելների մասին: պատմությունը նրա համար անհոգի կմախք է և ո՛չ բաբախուն սիրտ: Նա հետևակ գիտելիքներ ունի մեր պատմության այս կամ այն շրջանի մասին. գիտի ցամաք անցքեր, թվեր անուններ, այսքանը միայն: Նա սիկրտ չունի և սիրտ չի դնում իր դասերի մեջ: Միևնույն տրամադրևությամբ նա խոսում է և՛ Տիգրան Մեծի, և՛ Վեստ Սարգիսի մասին: Հպարտանքից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգերը, երբ պատմում է, թե ինչպե՛ս պարսից արքան, հայ սպարապետի անօրինակ քաջագործություններից հիացած, ամեն անգամ երբ գինու բաժակը շրթունքներին կմոտեցներ՝ կդժվարանար չբացականչել՝ <<Ճերմակաձին գինի խմի>>:Ամոթի զգացումը չի այրում նրան, երբ իր խոսքը հայ խռովասեր նախարարի չարագործությունների մասին է : Մեղմ ասած՝ ստեղծագործ վերապրում չէ նրա ավանդած պատմությունը, այլ անհոգի հնախոսություն, քանզի իրեն կպակասի ազգային հպարտանքի նվիրական զգացումը: գերազանցորեն հայրենապաշտ – ահա՛ թե ինչպիսի՛ն պիտի լինի պատմության դասատուն: Այդիսին չի՞ - ասել է՝ նրա տեղը դպրոցը չի: Ասել է՝ բարոյապես ազատ չի իր ձեռքն առնելու մեր ցեղի սրբազան գիրքը>>:

Այսպիսով, ըստ Նժդեհի, երիտասարդ սերնդի դաստիրակության, կրթության գործընթացը լավագույնս կազմակերպելու համար դպրոցը պետք է ապահովի հետևյալ պայմանները.

ա. շեշտված նպատակի ու ծրագրի, դասավանդման հստակ մշակված համակարգի առկայություն,

բ. ձևավորի հայրենասիրական մթնոլորտ,

գ. պետք է ունենա ազգային գիտակցության ձևավորմանը նպաստող աշխատանքներ կազմակերպելու կարողությունը,

դ. պետք է կիրառվի առարկայի մատուցման ստեղծագործական, զգացմունքային հագեցվածությամբ եղանակ:

Երիտասարդության հայրենասիրական, ազգային արժեքների պահպանման գիտակցության դաստիրակության գործում Նժդեհը մեծապես կարևորում է հայ կնոջ, մայրերի դերը. <<Մոր ազդեցությունը – որպես դաստիրակչուհին և հոգևորիչը մարտնչող սերունդների – նրա հրաշագործ ազդեցությունը այն ժողովուրդների համար, ինչպիսին է մերը, կմնա միակ լծակը, որ պիտի բարձրացնի և մեր ազգային դատը, որի ծանրությունն այսօր սարսափեցնում է միայն անհայրենասերներին>>:

Նժդեհը հայ կնոջ միջոցով է տեսնում հայ ընտանիքի հոգեփոխման ուղին, հայ ազգի հարատևման և բնականոն զարգացման գրավականը. << Մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը>>: Կնոջ միջոցով հոգեփոխել ընտանիքը, որի միջոցով էլ համայն հայությունը, ահա ՛ Նժդեհի մատնանշած ծանապարհը, որով հնարավոր է առողջացնել և բարձրացնել

աշխարհասփյուռ հայության տկարացած ազգային գիտակցությունը.

<<Սկսենք հայ կնոջից. աշխատենք անդուլ, մինչև որ սրա կաթը դառնա հայրենապաշտության սրբազան կաթը: Հայրենապաշտորեն դաստիարակենք հայ կինը և նրան թողնենք մեր մատաղ սերնդի դաստիարակության գործը>>:

Հատկանշական է նաև Նժդեհի հայ ազգային հոգեկերտվածքին վայել և իր ժամանակի համար առաջադիմակլան դիրքորոշումը հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ: Ըստ այդ տեսակետի ՝ ժողովորդների քաղաքակրթական մակարդակը մեծապես կախված է կնոջ ՝ հասարակության մեջ ունեցած դերակատարոըությունից. <<Կան ժողովուրդներ, որոնք դեռ հեռու են անկախության և քաղաքակրթության բարիքները վայելելու բախտից, որովհետև կնոջ ազդեցությունը տկար է նրանց մեջ: Իր ուսմունքով Նժդեհը փորձում է հայ նոր սերնդին տալ հոգեցեղային դաստիարակություն: Դիմե՛նք իրեն. Մի ժողովրդի ապագան կախված է ցեղային ա՛յն թթխմորից, որ դաստիարակության միջոցով դրվում է մարդ էակի էության մեջ՝ սրա ամենակճկուն հասակում… մեր հետապնդած դաստիարակությունը նած պիտի մշակի հայ մանուկի ցեղաշունչ սիրտը.. Իսկ ցեղաշունչ սիրտ ստեղծելու գործում դաստիարակչական բոլոր ազդակներից – ընտանիք, հասարակություն, ավանդություններ, դպրոց- մա՛յրն է ամենավճռական դեր

խաղացողը>>: նժդեհը բարձր էր գնահատում մոր դերը նոր սերնդի հայրենասիրական դաստիրակության գործում ՝ վստահ լինելով, որ հատկապես նրա ազդեցությամբ մանկան մեջ պետք է ներարկվի հայակենտրոն մտածելակերպ: Մայրը պետք է անսահման սեր և պաշտամունք ներշնչի դեպի մեր սրբազան Հայրենիքը:

Գլուխ երկրորդ: Մտավորականության դերը արժեքների ձևավորման գործում

Նժդեհը մեծապես կարևորում է նաև մտավորականության դերը հասարակության մեջ: Հայ հասարակության այդ խավի, ավելի ճիշտ ՝ ինչպես նժդեհն է նշում, ճշմարիտ մտավորականության բնորոշ գծերն են՝ բարոյական նկարագիրը, բարձր գաղափարականությունը, ստեղծագործելու, նոր իդեալներ, արժեքներ ստեղծելու ընդունակությունը, սրբության զգացումը, տեսական խղճմտանքը, հոգևոր արիությունը, ժողովուրդն իր ամբողջությամբ սիրելու, նրա համար տառապելու անսահման կարողությունը. <<Ի՛նչ խոսք, - գրում է Նժդեհը , որ նման մտավորականը, իրերի բերումով, կարող է տեղ գտնել այս կամ այն քաղաքական կազմակերպության մեջ, բայց նրա նվիրումն ու գործը չեն կրի դասակարգային, հատվածական բնույթ: Նրա համար գոյություն ունի ամբողջությունը – ազգը, որին անշահասիրաբար կծառայի>>:

Նժդեհի բնորոշած մարդկային այս բարձր հատկանիշներն էլ կարող են լավագույն օրինակ ծառայել երիտասարդության համար, միևնույն ժամանակ ՝ դաստիրակել դրան հասնելու ձգտում,տենչ, ձևավորել պետական, ազգային հավաքական մտածելակերպ: Չափազանչ տպավորիչ է հնչում նաև գարեգին Նժդեհի ստամտավորականությանը ՝ կեղծ, անարժան, ստորաքարշ, չակերտավոր մտավորականությանը բնորոշող բնորոշող հետևյալ հանճարեղ ձևակերպումը. <<Անզեղջ է հայ ստամտավորականը. ի զար անցան Ալիշանի ու Ռաֆֆիի, Ահարոնյանի ու Վարուժանի և այլոց դյութազնաշունչ ցեղականչերը, նրա համար անմատչելի մնացին հերոսականի բարձրունքները: Նա չսիրեց վտանգը, փախավ հերոսներ կրթող ազնվական վտանգից և իր երկչոտությամբ՝ հաճախ վտանգեց իր ժողովրդի ապագան: Երեկ պարտվողական էր, այսօր, նաև երկչոտության քարոզիչ:*Նրահամար՝ հերոսը արկածախնդիր է , իդեալիստը՝ տխմար, վախկոտը՝ խոհեմ, սրիկան՝ գործի մարդ: Քաղաքացիորեն անարի է նա, զզվելիորեն անարի. նրան, անգամ պաշտոնապես չի կարելի տեսնելը արդարների ու լավերի կողքին: Եվ այդ է պատճառը, որ այսօր հայ իրականության մեջ, ամեն քայլափոխում վատություն է դարանակալ, որ աղվեսները առյուծներ են խեղդում, սինքլորները՝Հիսուսներ են խաչում*>>:

Ժողովրդի, պետության կյանքում մտավորականության շարժիչ, վճռական, հոգեփոխիչ դերը շեշտելով Նժդեհը գրել է. <<Պարտվում է մի ժողովուրդ, հենց որ իրեն պարտված է զգում իր մտավորականությունը: Կորած է այն ազգային դատը, որի ղեկավարները կորած են համարում այն: Պայքարում տեղի է տալիս այն կողմը, որի առաջնորդող տարրերն

առաջինն հուսահատվում: Այո՛, հանձին ժողովուրդերի, միշտ էլ չափվում են իրենց մտավոականությունները , հաղթում կամ պարտվում իրենց առաջնորդող տարրերը: Եվ չի պարտվում այն կողմը, որ չի ուզում պարտվել>>:

Անդրադառնալով մամուլի դերին՝ Նժդեհը գրել է.<<Նրա պարտականութ- յունն է խտացած ճշմարտություններով լուսավորել ժողովուրդին դեպի ապագան: Չունի՞ մամուլն այս կոչումը՝ ավելորդ մակաբույծ է դա, և զուր տեղը ժողովուրդները կերակրում են այն իրենց հաշվին>>: Նժդեհը, հատկապես, շեշտում է մամուլի կրթիչ, դաստիարակիչ նշանակությունը, նրա մեծ դերը հայ ազգի հոգեբանական ինքանապաշտպանական համակարգի ստեղծման գործում. <<Լրագրություն և ո՛չ մամուլ – այս նշանակում է, թե մենք դռևս տհաս ենք, թե չենք կարողանում մեր կյանքի ներքին արտաքին եղելություններով, լուրերով… և ոչ ոք չի զգացել, թե այդպիսով մեղսակից է դառնում հայկական ողբերգության՝ վրիպեցնելով ժողովրդի ուշադրությունը իր փրկության միակ զենքից – իքնապաշպանությունից… >>:

Հայ ազգի կազմակերպման, երիտասարդույթան հայրենասիրական, հայրենապաշական դաստիարակության գործում մամուլի առողջարար դերի մեծացման նպատակով Նժդեհը դնում է հոգեփոխման պահանջ. <<Լրագիրմեն շատ ունենք, նույնիսկ ավելորդ, հիմա պետք՝ վերադաստիարակիչ հրապարակախոսություն: Հրապարակախոսություն, որ անսխալ կերպով ախտանշի մեր ցեղի հոգևորը և արմատական միջոցներ առաջարկի, որ վերագնահատումի ենթարկի մեր անցյալը և նոր ճշմարտություններ որոնի, որ լուսաբանի մեր ժողովուրդի կնճիռները, որ կռահի իր ժաղովուրդին սպառնացող վտանգը և դառնա նրա հոգևոր սպառազինումի ահազանգը: մամուլ, վերջապես, որ ազատվի օտարահատակ մտայնությունից և արություն քարոզի, որ խոյակների փոխարեն հերոսական ժողովուրդի մասին խոսի և այդ այդպես, մինչև որ հայությունը՝ խրոխտաբար կանգնած իր բարձրավանդակի վրա, ապացուցի աշխարհին, թե ինքը արի է – տեր իր հայրենիքին և ճակատագրին>>:

Նժդեհյանգաղափարախոսությունիցելնելով՝նշենքհետևյալը.մամուլիհիմնականգործառույթը, նպատակը, կոչումը պետք է լինեն երիտասարդության հոգեբանական նվաճումը, հայրենասիրական դաստիարակությունը և մղումը համազգային նպատակների իրականացմանը: Այդ գործը հաջողապես իրականացնելու համար մամուլը պետք է, նախ և առաջ՝ օտար, այլասերիչ, հակաազգային գաղափարախոսություններից ազատագրի հայ մտածողությունը: Այս տեսանկյունից հատկապես վտանգավոր են՝ ազգաքանդ

աշխարհաքաղաքացիությունը (կոսմոպոլիտիզմ), աղանդավորական կազմակերպությունների հոգեորսությունը՝ վերջին տարիներին, հիմնականում, արևմուտքից ներթափանցող բարոյազուրկ վարդապետությունները, որոնք խաթարում են մեր ազգային արժեհամակարգը, աղավաղում ավանդությունները, պառակտում ընտանիքները: Այդ վարդապետությունների ազդեցության չեզոքացմանը զուգահեռ՝ մամուլը պետք է իր նպաստն ունենա Հայ ազգային Գաղափարախոսության մշակման գործում: Հակառակ դեպքում, ըստ նժդեհյան տեսության, հայությունը կմնա հոգեբանորեն պառակտված և պատրաստի որս՝ հայաստանում իր հարևանների, Հայաստանից դուրս՝ օտարացման վտանգի համար:

Հատկանաշական է, որ հայ ժողովրդի ապագան Նժդեհը ճշմարտացիորեն կապում է երիտասարդ սերնդի Հայրենիքին նվիրվածության, հայրենասիրական ոգով դաստիրակության հետ. *<<... Ով հայրենապաշտ, ով գաղափարապաշտ երիտասարդություն ունի, նա էլ ապագա ունի*>>: Միաժամանակ ապագա սերունդների համար նա մատնանշում է հետևյալ ուղին. <<*Հայրերի ուղիով, նշանակում է՝ ավելի մեծ թափով ու նվիրումով շարունակել նրանց գործը, և այդ դեպքում ո՛չ թե կրկնելով նրանց տկարություններն ու սխալները, այլ՝ սրբագրելո՛վ*>>:

Երիտասարդության փրկարար դերը գնահատելով հանդերձ՝ Նժդեհը զգուշացնում է դրա հնարավոր վտանգների մասին՝ պատգամելով պետական մակարդակով հոգ տանել և լուծում տալ երիտասարդության հիմնախնդիր-ներին. *<<Երիտասարդությունը – դա լեռներից իջնող ամեհի մի հեղեղ է, որ կարող է և՛ օրհնաբեր, և՛ ավերիչ լինել: Ահա թե ինչու նրա պրոբլեմը – որ միշտ էլ կապ ունի տվյալժողովրդի ապագայի կառուցման խնդրի հետ – պիտի զբաղեցնի պետական և հասարակական գործիճների ողջ մտածումը>>:*

Ամեն ազգային գաղափար, ուսմունք, գաղափարախոսություն արդիական է այնքան ժամանակ, որքան դեռ կարողանում է ծառայել իրեն հետևող ժողովրդի ռազմավարական շահերին, նրա ներկա և ապագա բարօրության և անվտանգության ապահովմանը: Այդ տեսանկյունից, համոզված ենք՝ Նժդեհի տեսական ժառանգությունը, հատկապես՝ Ցեղակրոնության և դրա գաղափարական ժառանգորդ հանդիսացող Տարոնականության մեջ ամփոփված գաղափարները, հայ ժողովրդի համար ունեն մշտական արդիականություն: Նժդեհյան գաղափարախոսությունը մի հիմնարար ազգային ծրագիր է, աշխարհընկալում, որը տրամադրում է հայ ազգի անվտանգության, հետագա զարգացման, նրա հիմնախնդիրների, ազգային նպատակների լուծման և ներազգային ախտերի բուժման համակարգված բանալին:

Նժդեհյանգաղափարախոսության դրույթները չափազանց արժեքավոր են՝ այսօրվա ազգերի հանրությունում հայ ժողովրդի արժանի տեղն ապահովելու համար: Այդ գաղափարները լինելու են մեր պետության ճակատագիրը տնօրինող ուժերի քաղաքականության ելակետը: Այս ուսմունքը Նժդեհի պատգամն է, որն ուղղված է հայ ժողովրդի բոլոր սերունդների: Գարեգին Նժդեհի կյանքը գործունեությունն ու գաղափարխոսությունը մեզ սովորեցնում են ենթարկվելու փոխարենտիրապետել ժամանակին: Նա հանդես է եկել համախմբվելու, հզորանալուն միասնականորեն պայքարելու կոչով, քանզի, վստահ էր, որ կենսական խնդիրները չեն լուծվում միայն խոսքերով, այլև՝ երկաթով արյունով: Մեր փրկությունը մեր մեջ պետք է փնտրենք, քանզի աշխարհը հաստատում է բարձր սկզբունքներ, բայց ճանաչում է միայն ուժեղի իրավունքը: Միայն ազգային արժեքները գնահատող և պահպանող հայը կարող է այսօր և վաղը դիմագրավել ներքին ու արտաքին արհավիրքներին:

Նժդեհն իր ուսմունքով կոչ է անում կենաց և մահու պայքար մղել պարտվողական, հակազգային տարրեի դեմ: Այսօր մենք ապրում ենք համաշխարհային պատմության մեջ նախադեպը չունեցող՝ տնտեսական, տեղեկատվական պատերազմների և մշակույթների բախումների ժամանակաշրջանում: Արագ փոփոխվող աշխարհում աննախադեպ թափ ստացած գլոբալիզացիոն գործընթացները, երբ պետությունների միջև գծված քաղաքական սահմանները կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը, անընդմեջ նետում են նոր մարտահրավերներ: Դրանք, նախ և առաջ, սպառնում են քանակապես փոքր ազգերին և անկախ պետականության կառուցման սկզբնական փուլում գտնվող պետություններին: Այդ ինտեգրացիոն գործընթացները ցանկացած պետության համար, անշուշտ, ունեն նաև դրական բաղադրիչ, մասնավորապես՝ գիտության, տնտեսության և մի շարք այլ ոլորտների բնականոն զարգացումն ապահովելու և համաշխարհային հանրությանը զուգընթաց քայլելու տեսանկյունից: Սակայն այդ բնական գործընթացներն աշխարհի որոշ կենտրոնների կողմից երբեմն շահարկվում են՝ միացյալ ազգերին համահարթեցնելու, միօրինակություն պարտադրելու և իրենց մշակույթն ու արժեքները հրամցնելու համար: Ահա այս իմաստով նույնպես նժդեհյան ուսմունքի ոգեկոճումը կարևորվում է՝ այդ ազդեցություններին լավագույնս դիմակայելու, մեր ազգային դիմագիծը, ավանդույթները չկորցնելու և այլ նմանատիպ մնարտահրավերներին դիմագրավելու համար: Մեջբերենք մի քանի դիտարկում՝ ժամանակակից հայ մտածողների աշխատանքներից. <<Այդ գաղափարախոսությունը կամ փիլիսոփայությունը աշխատել է ոչ միայն 20-րդ դարի 30-40-ական թվականներին գաղթաշխարհի հայության միջավայրում, այլև շատ դրույթներ ուժի մեջ են այսօր և՛ դրսում, և՛ մայր հայրենիքում ապրողներիս համար…

Մեր օրերում, երբ տեղի են ունենում ազգային արժեքների անկում և այլափոխում, երբ գլոբալացումը ՝ որպես գերտերությունների, հատկապես ՝ մեծ երկրների որդեգրած քաղաքականություն առաջին հերթին ուղղվում է փոքրաքանակ ազգերի ինքնության ու էթնոպատմամշակութային համակարգերի դեմ, նժդեհյան գաղափարները, Հայրենասիրություն – Հոգևոր հայրենիք, Հայրենիք-ճշմարտություն – Աստված սկզբունքները և նրա ողջ գաղափարախոսությունն ունեն արդիական նշանակություն: Դրանք ազգապահպան, օտարամուտ արժեքներին ու գաղափարախոսություններին, աղանդներին հակադրվելու անհրաժեշտ պայմաններից են, կարևոր ուղեցույցներ ՝ յուրաքանչյուր հայի, հայության ու հայկականության ստեղծման ու ամրապնդման համար…

Ցեղակրոնությունը հանդես է գալիս նաև որպես մեթոդաբանական սկզբունք, որով Նժդեհը հիմնավորում է այլ ազգերի ու քաղաքակրթությունների հետ շփումների ու հարաբերությունների անհրաժեշտությունը, սակայն այնքանով, որքանով դրանք չեն հակասում ազգին ու ազգային: Եվ այդ սկզբունքն առավել կարևոր է նաև մեր օրերում, երբ հայության և Հայաստանի համար մեծ վտանգ են գերտերությունների, հատկապես ՝ ԱՄՆ-ի որդեգրած համընդհանրացումը (գլոբացումը), երբ ժողովրդի զանգվածային գիտակցության մեջ ուժեղանում է Արևմուտքի քաղաքակրթական ու մշակութային, հաճախ նաև՝ իրենց սպառած արժեքներին կուրորեն հետևելու ձգտումը: Հասարակության որոշ շերտերում

մեծանում է օտարամոլությունը ՝ այն աստիճան, որ ազգայինն ամբողջովին անտեսվում է: Գերակայությունը տրվում է օտարամուտ գորշություններին, անճաշակությանը, հոգու աղքատությանը… Միօրինակություն քարոզող տեսությունների և դրանց հետևում կանգնած ուժերի խնդիրն ակնհայտ է. շահարկելով ինտեգրման բնական գործընթացները ՝ բոլոր ազգերին պարտադրել միօրինակ բարքեր, միօրինակ մշակույթ, մտածելակերպ, հասարակարգ, տնտեսաձև, կարճ ասած ՝ աշխարհաքաղաքացու համընդհանուր կենսակերպ>>:

Եզրակացություն

Մենք ինքնե՛րս պետք է կառուցենք, շենացնենք մեր պետությունը և լուսավորենք նրա ապագան: Մենք պետք՝ պահպանենք, հարստացնենք և փոխանցենք հաջորդ սերունդներին այն, ինչը մեր նախորդները դարերի միջով հասցրել են մեզ: Մեր նպատակը պետք է լինի կառուցել սոցիալապես արդար, տնտեսապես հզոր և բնականոն զարգացման դինամիկայով օժտված պետություն, որն ի վիճակի կլինի իրականացնելու իր առջև դրված խնդիրները. դրանք են՝ ապահովել յուրաքանչյուր հայորդու և Հայաստան պետության արտաքին ու ներքին անվտանգությունը, սոցիալական բարեկեցությունը, օրենքի գերակայությունը, հայ ժողովրդի հոգևոր ու ֆիզիկական առողջությունը, նրա իրավունքների պաշտպանությունը, ազգային դիմագծի և արժեքների պահպանությունը, մշակութային անվտանգությունը, Հայրենապաշտական դաստիարակությունը, ազգային հասարակության ձևավորումը և համազգային նպատակների իրականացումը: Եվ հենց այստե՛ղ կրկին հառնում է նժդեհյան ուսմունքի արդիականությունը՝ ձգտելով իր թևերը բացել ու տարածել ամբողջ հայ ազգի՛ իր ցեղի վրա:

Ուստի ազգային ոգով կրթությունը պետք է դառնա հասարակության ամենակարևոր առաջնահերթությունը:

Օգտագործված գրականության ցանկ

- Գարեգին Նժդեհ <<Հատընտիր>>
- Հայագիտությունը դպրոցում